№ 120 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19 **1895** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19 № 120

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ներքին գործերի նոր մինիստրը.—Արծաթ և թուղթ փող Ռուսաստանում.—Լեռները անտառով պատելու փորձեր.—Նամակ Ատրպատականից. Նամակ Բագուից. Նամակ Մոսկվայից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մուշի դպրոցները. Նամակ Ամերիկայից. Նամակ Աստրիայից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐԸ

—

Հեռագիրը մեզ արդէն հաղորդեց, որ ներքին գործերի մինիստր Դուրնովօ նշանակվեց մինիստրների մասնաժողովի նախագահ, իսկ սենատոր Գօրէմիկին նշանակվեց ներքին գործերի մինիստր։ Մայրաքաղաքի լրագիրները համակրական յօդուածներ են նուիրում սենատոր Գօրէմիկինին, գովելով նրա աշխատասիրութիւնը, եռանդը և ազնուութիւնը։

«Нов. Время» լրագիրն ասում է, որ ներքին գործերի նոր մինիստրը անցել է լուրջ աշխատանքի մի դպրոց և բարձրացաւ իերարխիական սանդուղքով բացառապէս նրանով, որ լինելով անխոնջ բանուոր՝ կազմեց իր համար բարձր ազնուութիւն և հաստատ համոզմունքներ ունեցող մարդու համբաւ։ Իր նախընթաց գործունէութեամբ Գօրէմիկին օրէնսդէտ է և նրան ճանաչող մարդկանց ընդհանուր ասմամբ՝ խիստ օրինապահ է։

«Новости» լրագիրն ասում է, որ սենատոր Գօրէմիկին, ծառայելով զանազան վարչութիւնների մէջ, ամեն տեղ ցոյց էր տալիս խորին հմտութիւն, հաստատ համոզմունքներ և չափազանց մեծ եռանդ։ Իրաւաբանական և վարչական զանազանակերպ գործունէութիւնը չէր կարող ներքին գործերի նոր մինիստրին չը տալ ընդարձակ փորձառութիւն և բազմակողմանի ծանօթութիւն պետական վարչութեան բոլոր հիմնական հարցերի հետ։

«Бирж. Вѣд.» լրագիրն ասում է, որ սենատոր Գօրէմիկին շատ լաւ ծանօթ է զիւղական գործերի հետ, որոնց նա բազմակողմանի կերպով ուսումնասիրել է Լեհաստանի թագաւորութեան նահանգների զիւղացիների դրութիւնը կարգադրելու ժամանակ, երբ նա զիւղական գործերի կոմիսարի և սենատի եկրորդ դէպարտամենտի օբէր-պրոկուրորի պաշտօնն էր վարում։ Ինչպէս յայտնի է, այդ հիմնարկութեան մէջ են կենտրոնացած զիւղական գործերը։

ԱՐԾԱԹ ԵՒ ԹՈՒՂԹ ՓՈՂԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

—

Այժմ Ռուսաստանում արծաթի ռուբլին և թղթադրամ ռուբլին հաւասար արժէք ունեն։ Ով թղթադրամ ունի՝ կարող է փոխել արծաթադրամի՝ ռուբլին ռուբլով և ընդհակառակը, արծաթադրամը փոխարինել թղթադրամով։

Մի և նոյն ժամանակ թէ արծաթադրամով, թէ թղթադրամով մի ռուբլին արժէ՝ ոսկու հետ համեմատած՝ միայն 65 կոպէկ։ Եւ ուրեմն, ոսկու գինը բարձր է, իսկ արծաթի և թղթի փողի գինը ստոր, կամ ուրիշ խօսքով՝ ոսկու հետ համեմատած՝ ընկել են արծաթի առաջվայ գինը և թղթադրամի յայտարարված արժէքը։

Այդ փոփոխութեան պատճառն այն է, որ արծաթի հանքերի մեծ արդիւնաբերութեան պատճառով արծաթի քանակութիւնը վաճառականոցում շատացաւ և նրա գինը այնքան ընկաւ, որ հաւասարվեց ռուսաց թղթադրամին, որի գինը, ոսկու հետ համեմատած՝ ընկել էր վերջին ռուս թիւրքական պատերազմից յետոյ։

Ռուսաստանի ներքին նահանգներում շատ լաւ ազդեց կառավարութեան յայտարարութիւնը, թէ թղթադրամը փոխարինվում է հաւասար արժէքով արծաթի հետ։ Սակայն մասնաւոր բանկեր և սեղանաւորներ չը ցանկացան օգնութեան գալ մինիստրութեան դիտաւորութիւններին և չէին ընդունում զիւղացիներից ու գաւառական առևտրականներից արծաթի փողեր, կամ յարուցանում էին մեծ դժուարութիւններ։

Այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով, ֆինանսների մինիստրութիւնը նորերս իր կողմից յայտարարեց, թէ հրաման է արձակված, որ պետական բոլոր կասսաները, պօստային հիմնարկութիւնները, գանձարանի բոլոր գաւառական բաժանմունքները առանց որ և է արգելքի և դժուարութեան ընդունեն գումարներ հաւասարապէս՝ թէ արծաթով և թէ թղթադրամով ամեն ժամանակ և ամեն տեսակ վճարների միջոցին։

Այդ կարգադրութիւնից յետոյ մասնաւոր բանկերը սկսեցին ցոյց տալ իրանց կողմից պատրաստականութիւն՝ ընդունել անխտիր երկու տեսակ դրամներն էլ։

ԼԵՌՆԵՐԸ ԱՆՏԱՌՈՎ ՊԱՏԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

—

Քանի որ անտառների անհաշիւ կտրատելը մեծ վնաս է պատճառում երկրին, դրանից պակասում են աղբիւրների և գետերի ջրերը, նուազում է անձրևների քանակութիւնը, սկսում են յաճախ կրկնվել երաշտ տարիներ, այդ պատճառով, հասկանալի է, որ շատ մեծ նշանակութիւն ունեն բոլոր այն փորձերը, որոնք արված են անտառների տարածութիւնը աւելացնելու և նոր անտառներ տնկելու նպատակով։

Ճշմարիտ է, շատ դժուար է անտառներ աճեցնելը լեռնակողերում և լեռնալանջերում։ Սակայն հէնց այդ տեղերն են ամենից աւելի կարօտ անտառապատ դառնալու, որովհետև հաւասար հարթ տեղերը յարմար են երկրագործութեան համար, իսկ լեռնակողերը մեծ գին չունեն տնտեսութեան մէջ, այնպէս որ նրանց վրա անտառ դնելը բարձրացնում է այդ հողերի գինը, դարձնում է նրանց շահաբեր։

Այժմ Կովկասում հետաքրքիր փորձեր են կատարվում լեռներում անտառ դնելու նպատակով։ Այդ փորձերին կարելի է ծանօթանալ նոյն իսկ Թիֆլիսում (օրինակ, ս. Դաւիթի սարի վրա), որի շրջակայքի մի քանի կէտերում անտառի ծառերի մանր տունկեր են տնկված, որոնք բուսնում են աջողութեամբ։

Այդ փորձերի գլխաւոր առաւելութիւնը նրանումն է, որ նրանք չեն պահանջում առանձին առուներ շինել և նրանցով ջուր տանել նոր տունկերը ջրելու համար։ Անտառը ջրվում է անձրևների ջրերով, որոնց ամբարելու համար լեռնակողերի վրա փորված են բազմաթիւ փոսեր և փակ առուներ, որոնք թոյլ չեն տալիս անձրևաջրին դուրս հոսելու։ Այդ ջրերը ծծվում են հողի մէջ և սնդում այն փոքրիկ ծառերը, որ տնկված են այդ առուների մօտ։

Ծառեր բուսցնելու այս փորձերը խոստանում են աջող հետևանքներ։ Թիֆլիսի քաղաքային վար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, հոկտեմբերի 10/22-ին

Ջարդի, խժդժութեանց, կոտորածներու տեղատարափին մէջ է, որ բարենորոգումներու ծրագրին սուլթանէն ընդունուած ըլլալու լուրը իմացուեցաւ։ Ամիս մը առաջ ամբողջ Պոլիս ցնծութեամբ պիտի ընդունէր Ծրագրին ստորագրուած ըլլալուն լուրը, բայց այսօր տեսակ մը տխուր անտարբերութեան մէջ է, որ լսեցինք թէ հոկտեմբերի 5/17-ին սուլթանը վաւերացուցած է բարենորոգումներու ծրագիրը։

Ի՞նչ է այս ծրագիրը։

Կիրակի առաւօ, հոկտեմբեր 8/20, թիւրք թերթերը հրատարակեցին պաշտօնական աղդարարութիւն մը թէ «բարենորոգումներու կայսերական իրատէ մը ելած է»։ Այդ պաշտօնագրին թարգմանութիւնը կը գտնէք ներփակ։ Գրուած է ոճով մը որ թիւրքերուն հաճելի ըլլայ, մտքերը չինէ։ Վերիվերոյ գաղափար մը միայն կուտայ։ Բայց իսկականը ինչ է։ Դարձեալ պիտի ըսենք—ոչինչ ստոյգ գիտենք։ Ապրիլ 29 մայիս 11-ի Ծրագիրն է, որ ինչ-ինչ փոփոխութիւններով ընդունուած է։ Կըսուի թէ այդ փոփոխութեանց մէջ մեզի նպաստաւոր կէտ մը կայ, քոնթրոլը. իսկ աննպաստ կէտեր կան. ջնջուած է՝ երկրին դրամէն Պոլիս դրկելու դրուած սահմանը. ջնջուած է՝ քրիստոնեայ կուսակալներու անուանումը։ Ակէ զատ՝ քօմիսերին մահմէտական ըլլալը որոշ կերպով սահմանուած է. իսկ օգնականը հայ պիտի ըլլայ։

Բայց սոսկալին կայ. ընդհանուր մոռացումը (ամնիսթիա) վերցուած է։ Եթէ այս լուրը ըստուգուի, հարկ է ըսել թէ ինչ դէշ տպաւորութիւն առաջ պիտի բերէ։ Ոչ ոք պիտի ուզէ հանդարտ մնալ, քանի որ բանտերի մէջ կը հեծեն մեր եղբայրները, որոնք Հայաստանի զարհուրելի կացութեան դէմ բողոքողներէն եղած են։

Ինչպէս ըսի, որոշ ոչինչ գիտենք, թէև այս քանի մը կէտերը բաւական լաւատեղեակ աղբիւրէ են։ Դեսպանները բարեխոսեալ Ծրագրին մէկ օրինակը յանձնած են պատրիարքին պայմանաւ, որ ոչ ոքին պիտի հաղորդէ առ այժմ։ Կերևի թէ այդ բարեկարգութիւնները մեզի համար ըլլալու չեն, որ գաղտնի կը պահուին։

Ինչ որ ալ ըլլայ, գործը աւարտած է, և Անգլիոյ դեսպան սըր Ֆիլիպ Քըրրի երկու օրէն կը մեկնի Պոլսէն արձակուրդով Լօնտօն երթալու. ամսէ մը պիտի վերադառնայ։

—

Այս լուրն ալ բնականաբար անտես պիտի անցնէր, քանի որ պատրիարքին հրաժարականին, կամ աւելի ճիշդը տապալումին, խնդիրը զբաղեցուց մտքերը քանի մը օրէ ի վեր։ Ահա չորս հինգ օր է Պոլիսը տակնու

Հանդիսատեսները ոգևորվեցան ներկայացումից, ապրեցան գեղեցիկ զգացումներ, ուրախացան ու հիացան։ Ներկայացումը տևեց մինչև ուշ գիշեր։ Ներկայացումից հետո տեղի ունեցավ պարահանդես։ Ներկայացումը տրվեցավ Ալեքսանդրապոլի Ազգային թատրոնի կողմից։ Ներկայացումը ղեկավարեց Ալեքսանդրապոլի Ազգային թատրոնի գեղարվեստական ղեկավար Ս. Ալանյանը։

թիւն կայ այդ մարդկանց մէջ, որքան դատարկութիւն ու ագիտութիւն կայ այդ՝ ցիլինդր կրող գլուխների մէջ։

Եկեղեցական խորհրդի նախագահը չարունակում էր ծխականների անուան ցուցակի ընթերցումը, առանց ուշ դարձնելու՝ իրան լսող կայ թէ ոչ. զոռում-գոչումները չարունակվում էին իրանց կարգով։ Երբ ցուցակի ընթերցումը վերջանալու մօտ էր, աղմուկը մի փոքր դադարեց և վերջապէս սկսեցին ընդհանուր ժողովի նախագահ ընտրելը։

Ընթերցողը անչուշտ վաղուց արդէն գուշակած կը լինի, որ այդ դէպքերը տեղի են ունեցել Մօսկվայում, Գասպարեան անկելանոցի դահլիճում, ուր ներկայ հոկտեմբերի 1-ին 94 հոգի մօսկվաբնակ հայեր ժողովվել էին եկեղեցական խորհրդի երկու անդամ և երէցփոխ ընտրելու համար։

Այստեղացիների բարք ու վարքի պատկերը լրացնելու համար մնում է միայն աւելացնել, որ այդպէս վարտղները բոլորը պատկանում էին այն խմբին, որը մեծամասնութիւն էր կազմում, հետևաբար առանց այդ բոլոր այլանդակութիւնների՝ կարող էին իրանց ուզած մարդկանցը ընտրել, ինչպէս և արեցին, ընտրելով Ս. Մամիկոնեանին ընդհանուր ժողովի նախագահ, Ա. Ժամհարեանցին և նոյն Ս. Մամիկոնեանին եկեղեցական խորհրդի անդամ, Մ. Սաարբեկեանին երէցփոխ և Ի. Ժամհարեանցին երէցփոխանութեան կանդիդատ։

Ընտրութիւնները վերջանալուց յետոյ վիրաւորանք կրած եկեղեցական խորհրդի անդամը յայտնեց ժողովին բժիշկ-ծխականի վերոյիշեալ անվայել վարմունքը, ոլովհետև սաստիկ աղմուկի պատճառով շատերը չէին լսել, յանձնեց նրան ժողովի դատաստանին, և արտայայտելով իր խորին արհամարհանքը դէպի այդ պարոնը, աւելացրեց թէ՝ «Ամեն մարդ, գալով ընդհանուր ժողով, իրան պէտք է միանգամայն ազատով զգայ զանազան անվայել վիրաւորանքներից ու անպատուութիւններից, բայց ինչպէս երևում է այստեղ հարկ կը լինի զինված գալ ընդհանուր ժողով, որ հարկաւոր դէպքում կարելի լինի պաշտպանվել այդպիսի անակնկալ ու անպատեալի վիրաւորանքներից»։ Մինչև անդամ այդ խօսքերը առաջացրին զոռում-գոչումներ ընդդէմ խօսողի և ի պաշտպանութիւն բժիշկ-ծխականի, որը մեծամասնութիւն խաղմող խմբի էր։ Որովհետև գործը յանձնված էր ընդհանուր ժողովի քննութեանը, ընդհանուր ժողովի նախագահ Ս. Մամիկոնեան հարկ համարեց մի քանի խօսք էլ ինքն ասել թէ՝ «թէպէտ մի կողմից չէ կարելի չընդունել որ... բայց և միւս կողմից չէ կարելի չը խոստովանվել որ...» և այդպիսով հարցը քնացրեց։

Եթէ Գամառ-Քաթիպայի «Թիֆլիսի քէֆը» վերնագրով յայտնի ոտանաւորի առաջին տունը փոխելու լինենք և յարմարեցնենք մօսկվաբնակ հայերի բարք ու վարքերին, հետևեալը կը ստացվի.

Թէ սիրումիս թամաշա,
Պըտիս տեղնի Մօսկվումը,
Ինչ են անում համաշա,
Լոթիք... ծխականների ժողովումը։

Ե. Թաղիանոսեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Բաթում, հոկտեմբերի 15-ին

Տրապիզոնի կոտրածի մասին «Մշակում» տպագրած թղթակցութեան մէջ, ի միջի այլոց ասված էր, որ ռուսահպատակ Զիլինգարեան եղբայրները սպանված են։ Որովհետև այդ լուրը ճիշդ չէ, ուստի չատալում ենք ուղղել մեր սխալը։

Ռ. Դանիէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ երեկոյեան, հոկտեմբերի 18-ին, Ռուսաց դործակալութեան միջոցով, ստացանք հետեւեալ հեռագիրը Կ. Պոլսից. «Հայոց գործերին վերաբերեալ առանձին յանձնաժողովը ձեռնարկեց վերահսկող յանձնաժողովի անդամների և նահանգապետների օգնականների ընտրութեանը»։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Ազգային վարչութիւնը որոշեց քննիչ մը դրկել Տրապիզոն՝ կոտրածի գործը քննելու։ Որոշված է ուղարկել Յովսէփ վ. Այվազեան»։

—

«Արարատ» ամսագիրը հաղորդում է, որ կաթողիկոսական կնդակով արտօնութիւն է տրված Ատրպատականի թեմի առաջնորդական տեղապահ Սարաճեան վարդապետին՝ բռնալ Կենտրոնական դպրոց Սալմաստում։

—

Մեզ ուղարկված է տպելու հետեւեալը. «Նորերս, Բայազէտից դէպի մեր սահմանները եկած՝ Մէլիք անունով մի մարդ հետեւեալն է պատմում։ Թօսակցութեան նիւթը Սինաք լեռներում բնակվող Ջելալցի կոչված քիւրդ ցեղերի չարժումն է։ Սրանց հին ատելութիւնը իրանց դրացի հայդարցի կոչված քիւրդ ցեղերի վերաբերմամբ՝ նորոգվել և սուր կերպարանք է ստացել, չնորհիւ այն բանի, որ հայդարցիներից մի խումբ մարդիկ անցել են Նպատ լեռը և իրանց հին թշնամական վրէժը լուծելու համար՝ յարձակել են Ջելալցիների ոչխարի հօտը։ Իսկ վերջինները չը կարողանալով այս անարգանքը տանել՝ իրանց ցեղապետի հրամանով խումբ խումբ դիմում են Բայազէդ, հրացան, ձի, փամփուշտ և պատերազմական այլ պատրաստութիւններ տեսնելու դարնան։ Թէ որքան ճիշդ է այս լուրը, դրան չենք երաշխաւորում, միայն հիմնվելով այն յաճախ կրկնված ընդհարումների վրա, որոնք միշտ տեղի են ունեցել այդ երկու հարևան թշնամի ցեղերի մէջ՝ հաւանական է դարձնում շատերին կարծելու, որ գարունը բացվելու պէս սրանց մէջ տեղի կունենայ մի մեծ և անաւոր կռիւ»։

—

Օդեսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն շատ լուրջ կերպով զբաղված է Օդեսայում կանանց համալսարան բանալու հարցով։ Դրամական միջոցներ գտնելու համար, մտադրութիւն կայ իւրաքանչիւր տարի ժողովարարութիւն անել Օդեսայի շրջանի իգական գիմնազիաների աշակերտուհիների մէջ, իւրաքանչիւր աշակերտուհուց 1—2 ռուբլի, և այդպիսով մի դրամագլուխ կազմել, որ կը դնվի պետական բանկը։ Այդ ձևով, ասում են Օդեսայի լրագիրները, յոյս կայ, որ հնարաւորութիւն կը լինի մօտիկ ապագայում հիմնել կանանց համալսարանը։

—

Երկրագործութեան դեպարտամէնտի դիրեկտոր Կոստիչեվ, մանրամասն ծանօթանալով Թիֆլիսի այգեգործական դպրոցի ներկայ դրութեան հետ, այն կարծիքը յայտնեց, որ դպրոցը պէտք է աշխատի իր հողը մեծացնել և եթէ քաղաքում չէ կարելի գտնել այդպիսի հող, աշխատի աշակերտներին զբաղեցնելու համար գտնել մի ուրիշ այգի, որտեղ կարելի լինէր սովորեցնել աշակերտներին վաղապահութիւն և գինեգործութիւն։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ամսիս 12—13-ի գիշերը, ժամը 1-ից 5 բոպէ անց, այստեղ զգացվեց երկրաշարժի բաւական զօրեղ հարուած։ Ուղղութիւնը արևելքից դէպի արևմուտք էր։ Գիշերվայ ընթացքում դարձեալ երկու անգամ զգացվեցին հարուածներ, բայց աւելի թոյլ»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Շաբաթ, ամսիս 14-ին, Վասիլիեվ-Վեատկու թատրոնում Թիֆլիսի հայ դերասանական ընկերութիւնը տուեց իր առաջին ներկայացումը՝ «Ղարաբաղի աստղագէտը»։ Դերասանական նորակազմ խմբի դալուստը մի կողմից, պիէսայի նորութիւնը միւս կողմից առիթ էր տալիս ենթադրելու, որ խումբը աջողութիւն պիտի ունենայ. սակայն, տարաբաղդաբար, չարդարացաւ այդ ենթադրութիւնը. ղարաբաղցիներով հարուստ Բագուն անուշադրութեան մատնեց «Ղարաբաղի աստղագէտին» ևս. —գահլիճը կէսից աւելի դատարկ էր։ Վաղուց, շատ վաղուց է, որ մեզանում կարիք է զգացվում դերասանական մշտական խումբ ունենալու։ Տեղական ոյժերը, հազար ու մի զրկանքներ կրելով՝ այսօր խումբ են կազմակերպել և այդպիսով թատրոնական ծանր գործը իրանց ոյժերով առաջ տանել են ցանկանում, սակայն հայ հասարակութիւնը այդ կարևոր ձեռնարկութեան հէնց առաջին քայլում հանդիպում է սառնասրտութեան և պլսարակելի անտարբերութեան։ Շեշտելով հասարակութեան անտարբերութիւնը, անկարելի է մատնացոյց չանել նորակազմ խմբի մի քանի զգալի պակասութիւնների վրա։ Խմբի անդամներից շատերը իրանց դերերը չը գիտէին, որ ծանր տպաւորութիւն էր թողնում։ Մէլիքների թէ շարժումները, թէ դրիմը և թէ հագուստները անաջող էին ընդհանրապէս։ Ամբողջ ներկայացումը, բացառութեամբ աստղագէտ՝ Տէր-Դաւթեանի և Մէլիք-Բէգլար՝ Աբելեանի, անցաւ տաղտկալի և համարեա առանց տպաւորութեան։ Երկրորդ ներկայացումը՝ «Բարեգործական դիմակի տակ», նշանակված է երկուշաբթի, ամսիս 16-ին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՈՒՇԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

—

Մուշից գրում են «Հայրենիք» լրագրին.

«Մուշի մէջ ամէն թաղ իր վարժարանը ունի։ Ս. Մարինէի թաղի վարժարանէն զատ, միւսները զրոյի հաւասար են, նկատելով որ լոկ մէկ մէկ ազէտ ուսուցիչներ ունին, շատ անգամ դաշտի գեղերէն եկած տիրացուներ։ Ս. Մարինէի վարժարանը երկու ուսուցիչ ունի, Միացեալ ընկերութեանց Մշոյ Ներսէսեան վարժարանի նախկին սաներէն. ասոնց աշխատութիւնը և արդիւնքը գոհացուցիչ է. ուսուցիչներէն մէկն է պ. Գէորգ Մարզվեանը, ողբացեալ Տուտուխեանի պաշտօնակիցը. այսօր ստիպուած է ամիսը 75 ղրշի ծառայել ու ապրեցնել ընտանիք մը։

«Սակայն Մշոյ մէջ ուշադրութիւնը դրաւող միակ վարժարանն է Միացեալ ընկերութեան Ներսէսեան վարժարանը, այն վարժարանը որ 100-է աւելի ուսումնաւարտներ տուած է Մշոյ և շրջականերուն, որ կը հայթայթէ թէ ընկերութեան, թէ շրջականերու, Բաղէշի, Խնուսի ուսուցիչներու մեծագոյն մասը։

«Այդ վարժարանը այսօր կորսնցուցած է ոչ միայն իր փայլը, այլ իր բովանդակ հեղինակութիւնն ու ամբողջ այժը։ Ուսումնաւարտներ կուտայ. սակայն ինչ ողորմելի տղաքներ, երկու տող հայերէն չեն գիտեր ուղղագրել. գաղափար չունին, իսկ գրականութեան կամ գիտութեանց մէր, երբէք. վերջին տարիներու մէջ այս վարժարանի բարոյական ջերմաչափը այնքան իջած է, որ ժողովուրդը այսօր արհամարհանքով մինակ կը նայի դէպի այդ հսկայ բարոյական չէնքը, որ երբեմն այնքան փայլած է»։

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

—

Պոստոն, սեպտեմբերի 30-ին

«The Chsristian Register» անուն շաբաթաթերթին խմբագիրը վերջերս Կամախու աղէտալի անցքերու մասին գրելով՝ մեծ ցաւ կը յայտնէր, որ այդպիսի դէպքերու կրկնումը կարելի է, նոյն իսկ, երբ հայերու վիճակը բարւոքելու համար ամիսներ առաջ ծրագիր մէ ներկայացուած այդ ոճիրներու պատասխանատու կառավարութեան։ Խօսելով Ամերիկայի նկատմամբ, նոյն առաջնորդողին մէջ խմբագիրը վախ կը յայտնէր թէ ամերիկացւոց բոլոր համակրանքը, ժողովները, բաղաքները, խնդրագրերը անօգուտ կը լինին, քանի որ Պոլսոյ մէջ Ամերիկայի կառավարութեան ներկայացուցիչը միայն Թրքական տեսակէտէ կը դիտէ այդ ամենը։ Այդ խմբագրին հետ շատեր ևս Թրքին տեղ կարող և ազդեցիկ դեսպանի մը ներկայութիւնը անհրաժեշտ կը համարին սուլթանի մայրաքաղաքին մէջ, դէթ Ամերիկայի քաղաքացիներու պաշտպանութեան համար։

Յայտնի է թէ, քանի որ Միացեալ-Նահանգաց կառավարական ղեկը ներկայումս տիրող կուսակցութեան ձեռքը կը գտնուի, Ամերիկան շատ քիչ գործնական քայլ կրնայ առնել հայկական խնդրոյն առթիւ, բայց որքան ալ որ թոյլ լինի տէմոքրատներու արտաքին քաղաքականութիւնը, կրկին թրքամոլ Թրքին տարբեր մի մարդ մեծ գործեր կրնար կատարել նոյն իսկ ոչ պաշտօնապէս։

Անցեալները բարեկամ մը ցոյց տուաւ ինձ կարգ մը պաշտօնական թղթերու օրինակներ, որք փոխանակուած էին Ռուշինգթընի կառավարութեան և իր Պոլսոյ դեսպանին միջև՝ Սամսոյ կոտրածէն վերջ։

Այն ատեն Ամերիկայի կառավարութիւնը, ժողովրդեան յուզումէն ստիպեալ, սկսած էր լուրջ կերպով դիտել Թիւրքիոյ քրիստոնէից վիճակը, բայց նամակներէն որոշ կերևի, թէ ինչ ջանքեր ի գործ դրած է Թրքին համոզելու իր կառավարութիւնը, թէ այդ ամեն պատմութիւնները չափազանցութիւն են։ Սոյն ծառայութիւնները իրենց ժամանակին վարձատրուեցան սուլթանի կոչումներով, օրինակ, Թրքին շնորհուած չքանշանով։ Այդ դէպքերէն վերջ դեսպանը Լիսպոնի Գալէֆի հայ և պուլկար ուսանողաց քարոզներ կուտար, գովելով սուլթանի գթութիւնը և աշխարհահռչակ իմաստութիւնը։ Այդ քարոզները, որ թերևս Աշգեանի մը բերնէն իսկ չը պիտի յարմարէին, վերջերս ծաղրու նիւթ մատակարարեցին անգլիական թերթերուն։

Ահա այս է այն մարդը, որ մեծագոյն արգելքը հանդիսացած է Ամերիկայի մէջ հայոց ի նըպաստ կատարուած շարժումներու գործնական արդեան մը յանգելուն։ Կարելի է այդ խոչնդոտը շարժել։

Ժողովները կրկին սկսան գումարուիլ այլ և այլ տեղեր. մեծ միթինկի մը պատրաստութիւն կը տեսնուի, բայց այդ ամենը չատ քիչ օգուտ կունենան, եթէ Պոլսոյ մէջ Ամերիկայի ներկայացուցիչը իր ժողովրդին զգացմանց գէթ մի մասին թարգման չը հանդիսանայ։

Այստեղի «The Boston Transcript» անուն օրաթերթը Հռովմի Իտալիոյ մայրաքաղաք դառնալու քսանուհինգերորդ տարեդարձին առթիւ խմբագրականով մը այն գաղափարը կը յայտնէր, թէ Արևելեան խնդիրը լուծելու լաւագոյն կերպն է Պոլիսը Իտալիոյ տալ։ Այդ առաջնորդողը կոչնակ մէր հայ դիւանագիտաց ասպարէզ իջնելու։ Մին Պոլսոյ դռներէն վերջ ամբողջ Թիւրքիան կը բանար երախտագէտ իտալացւոց առջև. ուրիշ մը Հայաստանի մի անկիւնը իր գրած լատիներէն արձանագրութեան մը հիման վրա (գրողը հնութեանց վաճառական մէ) կը փաստաբանէր, թէ պէտք է կրկին Հռովմի քանակները իշխեն երբեմնի լատին կայսրութեան արևելեան մասին վրա։ Պատճառ, որովհետև Թիւրքիոյ մէջ չատ տեղեր կան հռովմէական ջրմուղներու, ճամբաներու աւերակներ և մանաւանդ դրամներ։ Զարմանալի է, որ մեր քաղաքագէտները մուացան Անգլիան ալ նոր կեսարի մը արշաւանաց ճամբուն վրա դնել ի պատիժ Սալիզպուրիի դանդաղ քաղաքականութեան։

Արմէն

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՅԻՑ

—

Վիէննա, հոկտեմբերի 5/17-ին

Սուլթանը այսօր վերջապէս ընդունեց մայիսի 11-ի բէֆորմների ծրագիրը.—ահա լուրը, որ եւրոպական թերթերը միահամուռ կը հաղորդեն այս երեկոյ։

Ես յամառած չարունակել մերժել այդ ծրագիրը այլ ևս անկարելի էր՝ Կ. Պոլսում և այլուր պատահած հայերի արիւնահեղ ցոյցերէն յետոյ։ Դա հայկական հարցի վերջին ֆազիսն էր, որի պէտք է յաջորդէր նորա լուծումը։ Մայրաքաղաքում, դեսպանների աչքին առաջ մի անգամ ևս թափվեցաւ քրիստոնեաների արիւնը և այդ թէև մարդկօրէն չատ ցաւալի է, սակայն մի անհրաժեշտ պայման էր մի տարիէ հետէ տատանող հայկական հարցին վերջ տալու համար։

Միայն առ այժմ յայտնի չէ, թէ արդեօք ծրագիրը փոփոխութիւնների ենթարկվեցաւ և թէ որոնք են այդ փոփոխութիւնները։ Ցամենայն դէպս, չեն կարծում, թէ եղած փոփոխութիւնները ամենաէական կարևորութիւն ունենան։ Այժմ հարցը սա է, թէ երբ պիտի սկսի բէֆորմների գործադրութիւնը։ Թէ կան դեռ չատ դժուարութիւններ, որոնց պէտք է յաղթեն հայերին հովանաւորող երեք քրիստոնեայ պետութիւնները, ակներև է։

Սուլթանը ոչ թէ յօժարութեամբ, այլ բռնի ընդունեց բարենորոգումների ծրագիրը, ուստի զանազան արգելքներ և խոչնդոտներ անպակաս պիտի լինեն Թիւրքերի կողմէն, որպէս զի բէֆորմների ներմուծվելը կարելի եղածին չափ քիչ օգուտ բերէ հայ ժողովրդին և թոյլ չը տայ, որ նա ազգային և տնտեսական տեսակէտից զարգանայ և զօրանայ։

Ուրեմն Թիւրքիայի հայերը կը մտնեն գործունէութեան մի նոր, թէև խաղաղ, սակայն ոչ նուազ դժուարին շրջան։ Արևան շրջանին պիտի յաջորդէ կուլտուրական կռիւի շրջանը, ուր կը բախվին, եւրոպականութիւնը և քրիստոնէա-

կան լոյսն և գեղեցիկ սկզբունքները պիտի լինեն հայի զէնքերը։

Այդ զէնքերը կատարելապէս վստահելի են և մօտիկ ապագան ցոյց պիտի տայ, թէ որ աստիճան վարժ են հայերը զանոնք գործածելու մէջ։ Որչափ լաւ գործածեն այդ զէնքերը, այնչափ մեծ պիտի լինեն հայոց աջողութիւնները։

X

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 հոկտեմբերի։ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչը վերադարձաւ արտասահմանից։

Ստատս-սեկրետար Դուրնովո նշանակված է Մինիստրների Մատաժողովի նախագահ՝ արձակվելով ներքին գործերի մինիստրի պաշտօնից և թողնվելով մնացած բոլոր պաշտօններում և կոչումների մէջ։ Ներքին գործերի մինիստրի օգնական Գօրէմիկին նշանակված է ներքին գործերի մինիստրութեան կառավարիչ։

«Новости» լրագիրը ասում է, որ ներքին գործերի, ֆինանսների և արդարադատութեան մինիստրութիւնները զբաղված են վաչխատութեան վերաբերեալ օրէնքը աւելի մանրամասն բացատրելու գործով։

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ, 16 հոկտեմբերի։ Սէուլից հաղորդում են, որ թագաւորն ընտրեց մէկ ուրիշ թագուհի և կայսրի տիտղոս ընդունեց։ Պետութիւնների ներկայացուցիչները բողոքեցին։ Թագաժառանգ արքունը արտակարգ դեսպանի պաշտօնով ուղարկվում է Եւրոպա և Ամէրիկա։ Տայվան-կուն թագաւորի հայրը աշխատեց նրան հեռացնել, որպէս զի իր սիրեկան թոռան համար մաքրէ ճանապարհը դէպի գահը։

Ֆորմոզա կղզուց հաղորդում են, որ եապոնացիները գրաւեցին Տաիվանֆու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 հոկտեմբերի։ «Нов. Время» լրագրին հեռագրում են Վլադիվոստոկից. «Պէկինից հաղորդում են, որ անգլիական նաւատորմը կենտրոնացաւ Ֆուչէում։ Անգլիան առիթ է պըտռում պատերազմ յայտնելու Չինաստանին։ Քաղաքական դրութիւնը հետզ Արևելքում անհատատ է, պէտք է սպասել վտանգաւոր բարդութիւններին, որ առաջ են բերում անգլիացիները։ Ռուսաստանի աջողութիւններին դիմադրելու համար, Անգլիան չարութեամբ ինտրիգներ է լարում բոլոր կէտերի վրա՝ խաղաղ ովկիանոսում իր խախտված վարկը բարձրացնելու իզուր յոյսով։

ՐՕՍՏՈՎ-ԴՈՆԻ ՎՐԱ, 17 հոկտեմբերի։ Հոկտեմբերի 16-ին կովկասից անցաւ դէպի Պետերբուրգ Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ իր ամուսնու հետ միասին։

ՊԱՐԻԶ, 17 հոկտեմբերի։ Բիբօի մինիստրութիւնը հրաժարական տուաց, հարաւային երկաթուղիների դատին վերաբերեալ հարցասնդումի առիթով պատգամաւորների ժողովի աննպաստ քուէարկութեան համար։

ԼՕՆԴՕՆ, 17 հոկտեմբերի։ Կ. Պոլսից հեռագրում են, որ սուլթանին սպառնական նամակ ուղարկելու համար մեղադրվեցին 14 պալատականներ, որոնք, իբր թէ, բոլորն էլ դլխատեցին։

ՍՕՖԻԱ, 17 հոկտեմբերի։ Այստեղ հասաւ կօբուրգեան արքունը իր ընտանիքով։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Հոկտեմբերի 17-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	92	ր.	70 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45	»	17½ »
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	36	»	65 »
Ոսկի — — արժէ . .	7	»	40
Մաքսային կուպոններ — .	148	»	— »
Արծաթ — — — . .	—	»	— »
Բօրսային դիսկոնտ — . .	6½		7½%
4% պետական բէնտա	98⅜	»	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . .	160	»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	270	»	— »
— — երկրորդ —	232	»	—
5% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	211	»	50 »
5% պետական երկաթուղ. բէնտա.	101	»	— »
4% Ներքին փոխառութեան . . .	97	»	50 »
4½% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100⅛		— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ			
4½% վայսկ. գիւղ. հող. բանկի	99	»	75 »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	150	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օբլիգացիաները.	100	»	50 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101	»	— »
Օդէսայի — —	100⅜	»	— »
Թիֆլիսի — —	97	»	50 »
Դրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկի 6%	101	»	50 »
— — — 5% . .	99½	»	— »
— — Բուխարայի 6% . .	101½	»	— »
— — — 5% . .	99	»	50 »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. *վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։*

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. *աչքի, ներքին և նեարդային հ.*

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ-ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—10—11 ժ. *կանանց և ներքին հ.*

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. *ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուչաբթի, չորեքչաբթի և ուրբաթ։*

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. *ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։*

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. *ներքին և երեխայոց հ.*

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. *երեքշ. հինգշ. և շաբաթ։*

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. *երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։*

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ—6—7 ժ. *Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.*

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ *քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիտի, արեան, կաթի և այլն։*

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Պատիւ ունեմ յայտնել Թիֆլիսի հայ հասարակութեան, որ թեմիս սրբազան առաջնորդը, հոկտեմբերի 22-ին, կիրակի օրը, առաւօտեան 10 ժամին կատարելու է, ԱՒԱԼԱՅ ԱԻԱՆԻ հայոց նորակառոյց սուրբ Աստուածածին եկեղեցւոյ օծումեան և օծման նաւակատեաց հանդէսը։

Հոգաբարձու Վասիլ Շերմազանեանց

(№ 120) 1—2

ԲԺՇԿԱՊԵՏ

Ե. Ս. ՖՐԱՆՑԻՈՒՍ

տեղափոխվեց Վելիամինովսկայա փողոցը տ. № 14. Քաղաքային Դումայի հանդէպ։

ԱԿԱՆՋԻ, ՔԹԻ և ԿՈԿՈՐԴԻ *հիւանդութիւններ ունեցող հիւանդների ընդունելութիւնը տեղի է ունենում 5—7 ժամ երեկոյեան։*

(№ 106) 12—20

1894 *թվից մատաղրութիւն կար* ԱԽԱԼՔԱԼԱՔ *գիւղում* ԳՐԱԴԱՐԱՆ *ունենալ։ գիւղը փոքր նպաստ տուաց, ընդամենը երեսուն ռուբլի, չնորհիւ պ. Յ. Արարատեանի, որով գնուեցան մանկական ընթերցանութեան գրքեր։ Ապա Աստուածատուր Թանդեանը և Ս. Խուդեանը ևս Թիֆլիսում հաւաքեցին 200-ի չափ գրքեր, որով գրադարանի հիմքը դրված է։ Սրանով զիմում ենք մեծարգոյ հեղինակներին և թարգմանիչներին՝ խնդրելով չը խնայել մի-մի օրինակ ուղարկել նորակազմ գրադարանի համար, որով նպաստած կը լինեն նրա աճմանը։ Գրքեր պէտք է ուղարկել հետեւեալ հասցէով.* Черезъ ст. Гракали сел. Ахалкалаки, свящ. Тер Акопу Бараміанцу.

Յակոբ քահանայ Բարամեանց

(№ 110) 3—4

Վաճառվում են

ԼԵՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

„ԱՅՑ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ“

Գինը 60 *կոպ.*

„ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ“

Գինը 20 *կոպ.*

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

„ԱԳՈՒԼԵՑՈՑ ԲԱՐԲԱՌԸ“

Գինը 2 *ռուբլի։*

կարելի է ստանալ Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում։ (№ 94) 9—10

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Լուսանկար Տէր-Ղեոնդեանի մօտ վաճառվում են հետեւեալ հայ գործիչների պատկերները՝

Հոգեորականներ.—հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ *և* ՄԵՍՐՈՊԻ։ *Ժամանակակիցներից՝* ՆԵՐՍԷՍ V, ԳԷՈՐԳ IV, ՄԱԿԱՐ *և* ՄԿՐՏԻՉ *կաթողիկոսների,* ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷՔՍԱՆԴԵԱՆԻ (*կաթողիկոս Կիլիկիայի*), ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ *և ուրիշ արժանաւոր հոգեորականների։*

*Նոյն տեղը վաճառվում են.—*ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ՐԱՖՖԻ, ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՑԻ, ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱԴԱՄԵԱՆԻ (*բոլոր դերերում նկարված*), ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ, *կենդանի* ԳՐՈՂՆԵՐԻ, *նշանաւոր հայ* ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՒՍԱԲԻ, ՄԱՐԻԱՄ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԾՐՈՒՆՈՒ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ *յօբելեանական ալբոմը, նմանապէս և ուրիշ զանազան գործիչների լուսանկարները։*

Վերոյիշեալ պատկերները արժէն՝ *մեծադիր* 3 *ռուբլի,* ՄԻՋԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 *ռուբլի,* ԿԱԲԻՆԷՏԱՅԻՆ *կոչված պատկերները՝* 40 *կոպէկ,* ՎԻԶԻՏ *կոչված պատկերները՝* 20 *կոպէկ։*

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Фотографія Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). *Ճանապարհածախսը գնողի վրա է։*

(№ 117) 2—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԷԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

որոշում է յայտարարում է, որ նրա չինութեան մէջ, Երևանեան հրապարակի վրա, Տէր-Աստուածոյի նախկին տան մէջ, այս 1895 *թվի հոկտեմբերի* 19-*ին, առաւօտեան* 11 *ժամին տեղի կունենայ աճուրդ՝ կամաւոր գնով ծախելու համար հետեւեալ անձանց պատկանող կալուածքները.*

1) *Իսմայիլ Բէկ Ախմէդ Բէկովիչ Շելիանսկիի, բաղկացած մի հողաբաժնից, քսան և եօթ ու կէս քառ. սաժէն տարածութեամբ, դրա վրա երեք յարկանի տուն, որ գտնվում է Թիֆլիս քաղաքի* 5-*րդ քաղաքամասում, Ֆօմինայա փողոցի վրա,* № 11.

2) *Վասիլի Սեմէօնովիչ Մաթուզովի, բաղկացած մի հողաբաժնից, եօթանասուն և ինն քառ. սաժէն տարածութեամբ, վրան մի յարկանի տուն, ներքնայարկով (խանութներ), որ գտնվում է Թիֆլիսի* 7-*րդ քաղաքամասում, Լազարեվսկայա փողոցի վրա և*

3) *Բագրատ Եգօրովիչ Եարալովի, բաղկացած երկու հողաբաժիններից, նրանց վրա եղած բոլոր շինութիւններով, որոնցից մէկի տարածութիւնն է եօթանասուն վեց և կէս քառ. սաժէն, իսկ միւսինը հարիւր վաթսուն քառ. սաժէն, որ գտնվում է Թիֆլիսի* 5-*րդ քաղաքամասում, երկու պէրէուլկաների մէջ, որոնք դուրս են գալիս Պէտերհոֆսկայա փողոցի վրա։*

Վերոյիշեալ կալուածների աճուրդը կը սկսվի այն դումարից, որ կառաջարկեն այդ կալուածները գնել ցանկացողները, սակայն աճուրդների վաւերացումը կախված կը լինի Ընկերութեան վարչութեան և վերահսկող Մասնաժողովի Միացեալ ժողովի բարեհաւանութիւնից։

(№ 118) 3—3

ԿՈՅՐԵՐԻ ԴՊՐՈՑ

(Նաբերեժնայա, տուն Մամիկոնեանի)

Ընդունում է պատուէրներ աշակերտների ձեռքով պատրաստած առարկաների համար.

1) ԴՈՐԴԵՐ ՄԱՀՈՒԴԻ ԿՏՈՐՆԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ 2 *արշին լայն.* 3 *արշ. երկար. արժէ՝* 2 *ռուբլի,* 1 *արշին լայն.,* 2 *արշ. երկար. արժէ՝* 1 *ռուբլի։*

2) ԵՂԵԳԻՑ ՀԻՒՍԱԾ ՆՍՏԱՐԱՆՆԵՐ, *սթոռները՝* 60 *կոպ. դիվանները՝ համաձայնութեամբ։*

3) ՁՈՒԱՆԻՑ ՀԻՒՍԱԾ ՏՕՊՐԱԿՆԵՐ 1 *ր.* 50 *կոպէկից մինչև* 2 *ր.* 50 *կոպէկ.*

(№ 117) 4—5

ԿՐԱԿԻ ԴԷՄ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ապահովագրում է ամեն տեսակ շինութիւններ Թիֆլիս քաղաքի մէջ

ՏԷԼԷՖՕՆ № 288

Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրա, և բաց է առաւօտեան 9 *ժամից մինչև* 2½-*ը կէս օրից յետոյ։*

Մուտքը Վէլիամինովսկայա փողոցից, քաղաքային դումայի պոդէզդով։

(№ 90) (Տ.) 10—20

ԳՈՐԾԱՐԱՆ

Գ. ԵՒ Վ. ՄԱՐԳԱՐԵԱՆՆԵՐԻ

Տեսպլիէ բեադի, Ալէքսանդրովսկայա լինիա, № 107—108

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ.

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ՄԵՏԱՔԻԷ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Սաղա և ծաղկաւոր մախմուր, պլիուշ, լենտ-գօտիկ, ճակատանոց, գլխի աղլուխ, բարձի երես, պլիուշի գորգ, և այլն։

ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ. *Գանձովսկայա,* № 31, Յ. Գ. *Մարգարեանի մօտ։*

(№ 79) 10—10

ԿԱԿԱՕ ԲԼՕԿԼԻՐ

ՍԱՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ (*գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար „ԵԱՎԱ“ Ֆիրմայի մէջ.* (С.-Петербургъ, Большая Морская, 38).

Ծախվում է կօլոնիալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մագազիններում 1/1, 1/2, 1/4 *և* 1/8 *կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ։*

(GRAND PRIX) *Բարձրագոյն պարգև Անվէրսկէնի համաշխարհային ցուցահանդիսում* 1894 *թվին։*

(№ 151) 49—50

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Октября 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.